

# ԵՐԱԺԻՇՏ



Երևանի Կոմիտասի անվան  
պետական կոնսերվատորիա

Yerevan Komitas  
State Conservatory

Ереванская государственная  
консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (228)

#12 Գեկտեմբեր 2024

## «Հովեր» պերական կամերային երգչախումբը Փարիզում



«Հովեր» պերական կամերային երգչախումբ, խմբավար Սոնա Հովհաննիսյան

## Կայացավ Գոհար Գասպարյանի անվան մեներգիչների համահայկական 9-րդ մրցույթը



Գոհար Գասպարյանի անվ. մեներգիչների համահայկական մրցույթի մրցանակակիրները

## Презентация книги и фортепианного альбома Софы Азнаурян (к юбилею композитора)



Рузанна Степанян, Анна Гарсоян, Лилит Епрелян, Цовинар Мовсисян,  
Саеник Магакян, Софа Азнаурян, Арутюн Салуэлян, Лилит Ернджакян,  
Нарине Аветисян, Наталья Аслиарян.  
Союз композиторов Армении, 30.10.2024



Տիգրան Բախվեջյան

Լոնդոնի Թագավորական երաժշտական  
ակադեմիան՝ օպերային երգիչ  
Տիգրան Բախվեջյանի համար  
համաշխարհային բեմերը նվաճելու  
երազանքին հասնելու ուղի





## Կայացավ Գոհար Գասպարյանի անվան մեներգիչների համահայկական 9-րդ մրցույթը



Դավիթ Ղազարյան

(տեղի ունեցավ վիճակահանությունը): Առաջին փուլը կայացավ դեկտեմբերի 2, 3, 4-ին (Պ. Չալկովսկու անվան ՄՍԵԴ Տ. Հայրապետյանի անվան մեծ դահլիճում), երկրորդ փուլը՝ դեկտեմբերի 6-ին, 7-ին (Նույն տեղում), իսկ երրորդ փուլը՝ դեկտեմբերի 9-ին (Արամ Խաչատրյանի անվ. համերգասրահում):

2-րդ մրցանակին արժանացան՝ Վիկտորյա Մելքոնյանը (ղեկավար՝ պրոֆեսոր Գայանե Գեղամյան), Սոֆյա Սիմոնյանը (ղեկավար՝ պրոֆեսոր Ռեբեկա Օջախյան) և Հովհաննես Օրդանյանը (ղեկավար՝ պրոֆեսոր Գայանե Գեղամյան):

3-րդ մրցանակը շնորհվեց



Ծովինար Մովսիսյան



Գայանե Գեղամյան, Զարուհի Ղազարյան, Էդուարդ Թովչյան, Աննա Քոչարյան

1 Դեկտեմբերի 9-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Աշխատանքի հերոս, Սուրբ Մեսրոպ Մաշտոց շքանշանակիր, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր, Երևանի պատվավոր քաղաքացի Գոհար Գասպարյանի անվան մեներգիչների (ակադեմիական երգեցողություն) համահայկական 9-րդ մրցույթի (նվիրված մեծանուն երգչուհու ծննդյան 100-ամյա հոբելյանին) Գալա համերգը և մրցանակների հանձնման արարողությունը: Երեկոյի պատվավոր հյուրն էր ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, ԵՊԿ շրջանավարտ Դանիել Դանիելյանը, ով իր ողջույնի խոսքում ընդգծել է, որ Գոհար Գասպարյանն իր անգուցական դերերով և անմոռանալի կատարումներով չորս տասնամյակ շարունակ զարդարել է հայ օպերային թատրոնը, անմնացորդ նվիրումով կրթել ապագա երգիչների մի քանի սերունդ:

Նշենք, որ մրցույթը մեկնարկել էր նոյեմբերի 29-ին

Մերի Միսակյանին (ղեկավար՝ դոցենտ Մագդա Մկրտչյան), Արթուր Մկրտչյանին (ղեկավար՝ պրոֆեսոր Կոնստանդին Սիմոնյան) և Հայկ Փողոստյանին (ղեկավար՝ դոցենտ Լիանա Վարդանյան):

«Հույսի մրցանակ» հատուկ մրցանակին արժանացավ Վարդան Խաչատրյանը (ղեկավար՝ պրոֆեսոր Կոնստանդին Սիմոնյան), «Կոմիտասի ստեղծագործության համար լավագույն կատարում» մրցանակին՝ Մարիամ Գրիգորյանը (ղեկավար՝ պրոֆեսոր Օլգա Զաքարյան): Լավագույն կոնցերտմայստեր ճանաչվեց ԵՊԿ Ակադեմիական երգեցողության ամբիոնի ուսումնական ասիստենտ Իզաբելլա Շախաումվարյանը:

Մրցույթի, որի կազմակերպիչներն են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Հայաստանի երաժշտական ընկերությունը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, հանձնախմբի կազմում էին՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար

Էդուարդ Թովչյան, Իզաբելլա Շախաումվարյան

և գլխավոր դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Էդուարդ Թովչյանը (նախագահ, նա նաև քննադատական խոսք ասաց), ՀՀ ժողովրդական արտիստ Բարսեղ Թումանյանը, ԵՊԿ Ակադեմիական երգեցողության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, «Մովսես Խորենացի մեդալակիր» Գայանե Գեղամյանը, Հայաստանի երաժշտական Ընկերության Պատվավոր նախագահ, ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Դավիթ Ղազարյանը, ԵՊԿ Ակադեմիական երգեցողության ամբիոնի դոցենտ, ՀՀ վաստակավոր արտիստ Հասմիկ Հացագործյանը, ԵՊԿ Ակադեմիական երգեցողության ամբիոնի պրոֆեսոր, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Աննա Քոչարյանը, ԵՊԿ Կոնցերտմայստերական ամբիոնի վարիչ, դոցենտ Զարուհի Ղազարյանը:

Պապրասպեց՝  
ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

## «Հովեր» պերական կաներային երգչախումբը Փարիզում

1 Փարիզի հնագույն Սեն Ժերմեն դե Պրե եկեղեցում, նոյեմբերի 23-ին, «Մեկ շաբաթ Արևելքում» փառատոնի շրջանակում, տեղի ունեցավ «Հովեր» պետական կաներային երգչախմբի համերգը՝ ՀՀ վաստակավոր գործիչ, խմբավար Սոնա Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Ծրագրում ընդգրկված էին հայ դասական և ժամանակակից, ինչպես նաև արևմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ (Կոմիտաս, Տ. Մանասիրյան, Է. Հովհաննիսյան, Ա. Ավիզյան, Բ. Բրիտեն, Ռ. Մ. Շաֆեր, Վ. Բուխենբերգ, Ֆ. Պուլենկ):

«Մեկ համար պարիսկ ու պարասխանարություն էր «Մեկ շաբաթ Արևելքում» փառատոնին «Հովեր» պերական կաներային երգչախմբի մասնակցությունն ու հայ խմբերգչային երաժշտությունը ներկայացնող համերգային ծրագրով Փարիզում կրկին հանդես գալը: Շնորհակալ ենք Ֆրանսիական կողմին ջերմ ու պարզավոր ընդունելության, լեցուն դահլիճի, սիրտ ու ջերմության փոխանակման և այս ամենը հնարավոր դարձնող ֆինանսական աջակցությանը:

Միջոց դժվար է գրել պաշտոնական տեքստեր, երբ այսքան լեցուն ևս հազար ու մի տպավորություններով: «Հովեր» երգչախմբի՝ Ֆրանսիայում ունեցած տասնյակ համերգների շարքում այս մեկն առանձնահատուկ էր նրանով, որ կայացավ Փարիզի ամենահին՝ Սեն Ժերմեն դե Պրե եկեղեցում, որի միջավայրն ու ակուստիկ բացառիկությունը զարմանալի խորհրդավորություն հաղորդեցին մեր երույթին: Հայ հոգևոր, աշխարհիկ և ժամանակակից հեղինակ-

ների ստեղծագործությունների կողքին ներկայացվեցին մեր ծրագրում տարիների ընթացքում հղկված մի շարք արևմտաեվրոպական խմբերգչային ստեղծագործություններ, որոնք, 33-ամյա երգչախմբի փորձառության խորքերից հասնելով ներկայիս երգիչների երկրասարդ կազմի ընթերցմանը, սրելով են փարիզյան ոգուն համարվեց գուցա հեղինակներ՝ անցյալի և ներկա ժամանակների ֆենոմենային երաժշտականությունը: Օրինակելի և անմոռանալի է ավանդականի և մոդերնի համերաշխության փարիզյան կյանքի բոլոր մակարդակներում սավառնող այրվապի ոգին այս հմայիչ քաղաք ուր դնող յուրաքանչյուր մարդու համար:

Ի նշան անվերապահ նվիրման՝ «Հովեր» երգչախումբը պարտապարտ է նոր համերգային ծրագիր, այս անգամ Երևանում, «2025-Ֆրանկոֆոնիայի» շրջանակներում, - գրել է «Հովեր» պետական կաներային երգչախմբի գեղարվեստական ղեկավար և խմբավար Սոնա Հովհաննիսյանը:

UN WEEK-END À L'EST փառատոնը հիմնադրվել է 2016 թվականին և էական դերակատարում ունի Արևելյան-Արևմտյան Եվրոպայի երկրների միջնակցության կապերի ամրապնդման համատեքստում: Հատկանշական է, որ յուրաքանչյուր տարի Ֆրանսիան՝ ի դեմս փառատոնի, հյուրընկալում է միայն մեկ երկիր (քաղաք)՝ արդյունքում մեկ շաբաթում ապահովելով տվյալ երկրի երաժշտական, գրողական, ֆիլմարտադրության, ծարտարապետության, պարարվեստի և արվեստի այլ ճյուղերի կատարողական, ներկայացուցչական և փոխազդեցության հնարավորու-

թյունները: Անցյալ տարի փառատոնային օրերը նվիրված են եղել վրացական մշակույթին (Թբիլիսի), նախորդող տարիներին՝ Վարչապետին, Կիևին, Բուդապեշտին, Սոֆիային, Օդեսային: Այս տարի փառատոնի թեման հայկականն էր, ընտրված քաղաքը՝ Երևանը:

Սեն Ժերմեն դե Պրե արքայությունից (Ֆրանսերեն՝ *l'abbaye de Saint-Germain-des-Près*, «Սեն Ժերմեն դե Պրե եկեղեցի») պահպանվել է միայն Սեն Ժերմեն դե Պրե եկեղեցին, որը համարվում է ամենահինը Փարիզում: Եկեղեցու զանգակատունն ու նավը կառուցվել են ժամանակակից ոճով և թվագրվում են XI-XII դարերով: Սեն Ժերմեն դե Պրեն միջնադարում Ֆրանսիայի ամենահարուստ վանքերից մեկն էր: Նրա ունեցվածքի նկարագրության մեջ (Վանահայր Իրմինոնի պոլիպտիխը, IX դարի սկիզբ) թվարկված են 25 կավածքներ և ավելի քան 2 հազար գյուղացիական ընտանիքներ: Միջնադարում համարվել է հարուստ ու կարևոր կրոնամշակութային կենտրոն՝ հռչակված իր պատկերազարդ ձեռագրերով, դպրոցամբ, գիտնականներով: 1953 թ. ստացել է հուշարձանի կարգավիճակ:

Նյութը պապրասպեց՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ  
«Հովեր», Փարիզ, 2024թ.  
<https://www.facebook.com/YerevanStateConsevatory>



## Презентация книги и фортепианного альбома Софы Азнаурян (к юбилею композитора)

В 2024 году отмечает юбилей замечательный армянский композитор, музыковед, редактор журнала «Музыкальная Армения» Софа Азнаурян. К этой дате приурочены издание книги под названием «Не подводя итоги. Композитор Софа Азнаурян», а также фортепианного альбома «Музыка для детей», презентация которых состоялась в зале Союзе композиторов Армении 30 ноября 2024 года.

Творчество Софы Азнаурян многожанрово. В ее творческом багаже четыре оперы, музыка к театральным постановкам, пьесы для камерного оркестра, хоровые сочинения, камерно-инструментальные ансамбли, вокальные циклы, романсы, эстрадные песни и песни для детей.

При наличии интересных инструментальных опусов, главенствующее положение в наследии композитора составляют вокальные жанры. Это и оперы (две мооперы «Роковое пророчество» («Надежда») и «Гамлет», камерная опера «Армения» и опера для детей «Приключения Чикарели»), и хоровые произведения и, несомненно, вокальные циклы («Мгновение», вокальный цикл «Մի րոպե միայնակ», Семь песен для детей на народные тексты и др.) и произведения малой формы – романсы и песни. В этом контексте довольно закономерно, что в 2019 году Софа Азнаурян была удостоена премии международного культурного фонда «Вааан Текеян» за монооперу «Армения».

Музыка Софы Азнаурян звучит и в исполнении известных коллективов (Трио имени Арама Хачатуряна, Трио «Шелл», дуэт «Арс Лунга»), и маститых артистов (Асмик Папян, Маргарита Овсепян, Эльвина Макарян, Армен Маилян, Саеник Магакян), молодых музыкантов и юных исполнителей, только начинающих свой путь в мире музыки. Сегодня Софа Азнаурян находится в самом расцвете творческого таланта и продолжает активно создавать и как композитор, и как автор интереснейших статей о музыке и музыкантах. Одно из последних сочинений композитора вокальный опус «Հայ եմ» для тенора и органа на слова Арутюна Самуэляна. Отметим, что именно Арутюн Самуэлян является автором визуальной концепции книги «Не подводя итоги».

Отдельная глава жизни Азнаурян это ее музыковедческая и редакторская деятельность. С 2000 года и по сей день она является редактором русских текстов журнала «Музыкальная Армения» и автором многих статей.

Книга получилась довольно объемная – в ней 360 страниц! Языки – армянский и русский как отражение судьбы героини. Состоит книга из трех глав и своеобразного вступления, в котором представлено слово рецензентов книги – музыковеда, доктора искусствоведения Маргариты Рухкян и композитора, кандидата искусствоведения Михаила Кокжаева. На первых страницах приведены не только рецензии, но и отзывы композиторов Арама Сатяна и Роберта Амирханяна.

Первая часть книги, озаглавленная «Композитор», – это статьи, посвященные Софе Азнаурян и ее творчеству. Это яркий и запоминающийся портрет, сложенный яркой мозаикой. Авторы статей представители разных поколений музыковедов: корифеи отечественного музыковедения Маргарита Рухкян и Светлана Саркисян, представители следующих поколений музыковедов Лилит Епремян, Лилит Григорян, Маргарита Багдасарян, Маргарита Киракосян; представитель армянской диаспоры в США Григор Питечян (его статья в книге дана на западно-армянском).



Софа Азнаурян, Ованес Орданян



Маргарита Багдасарян

ском), российские музыковеды Алла Кармадонова и Игорь Корчмарский; исполнители-исследователи творчества Азнаурян: пианистки Саеник Магакян и Анна Тамирогян, контрабасист Саркис Балбабян; журналисты Татьяна Арабян, Самвел Даниелян, филолог Анаит Саакян; студенты Армянского государственного педагогического университета имени Абовяна. Статьи и очерки снабжены нотными примерами и фотографиями.

Вторая часть – «Артвин» – галерея биографических данных и своеобразный фотоальбом. «Оставленная родина на берегу Чороха» это рассказ героини о ее корнях. Он начинается с рассказа о прадеде Мкртыче Азнауряне.

Третья часть – «И о музыке, и о людях» – своеобразный калейдоскоп музыкальной жизни со всем ее разнообразием, иллюстрированный фотографиями героев. Здесь собраны очерки, рецензии, статьи, интервью, написанные Азнаурян на протяжении более, чем двух десятилетий. Герои Азнаурян – это Григор Егизарян, Владилен Баллян, Эдвард Мирзоян, Гия Канчели, Маргарита Рухкян, Шушаник Апоян, Ваагн Стамболцян, Светлана Навасардян, Вилли Вайнер, Микаэл Таривердиев, Левон Чаушян, Ваче Шарафян, Карэн Шахгаддян, Элисо Болквадзе, Карен Ана-

нян, Артур Аванесов, Мартын Улиханян и др.

Есть и рецензии на книги: «Фрагменты» Эдварда Мирзояна, «Эдвард Мирзоян в письмах и диалогах» Лилит Епремян, «Александр Арутюнян: особенность композиторского стиля» Михаила Кокжаева.

Завершает книгу приложение «Хронограф», которое делится на подглавы, названия которых говорят сами за себя: Основные даты жизни и деятельности; Музыкальные сочинения Софы Азнаурян; Либретто опер; Софа Азнаурян: очерки, рецензии, статьи, интервью; Литература о Софе Азнаурян; Концерты; Записи произведений Софы Азнаурян в архиве Общественного радио республики Армения; Указатель имен.

Книга современна и идет в ногу со временем. Так например, раздел «Записи произведений Софы Азнаурян в архиве Общественного радио республики Армения» снабжен QR-кодами, что дает возможность с легкостью найти и послушать музыку автора.

Фортепианный альбом Софы Азнаурян «Музыка для детей» состоит из 19 разнохарактерных пьес и адресован юным пианистам разного возраста. Самые легкие – «Игра», «Вальс», «Народная» – могут исполнять учащиеся 3 класса детских музыкальных школ. К сложным пьесам можно отнести произведение крупной формы (Сонатина в 3-х частях) и три фуги сборника (2-х, 3-х, 4-х голосные). По мнению пианистки, доцента кафедры истории и теории исполнительского искусства и педагогической практики Шушаник Бабалян наиболее сложной из них является «серьезная, очень интересная Двухголосная фуга».

Часть пьес программны: «Игра», «Скерцо», «Танец», «Вальс», «Народная». Включен в сборник и жанр этюда. К разновидности жанровых пьес можно отнести пьесы «Игра» и «Скерцо», к жанрово-танцевальным – «Вальс» и «Танец».

Музыка Софы Азнаурян всегда национальна. Но хочется отдельно выделить те пьесы сборника, которые непосредственно связаны с армянской народной мелодикой. Это «Народная», «Скерцо» – в среднем разделе которого прослушиваются интонации песни «Բերնի եկա՛վ ի՛նքն ինքն» и, конечно же, обработка для двух фортепиано песни «Հայն զմեռն».

Некоторые пьесы из фортепианного альбома уже давно исполняются в детских музыкальных школах, так как отдельные пьесы были включены в сборники педагогического репертуара, изданные Республиканским методическим кабинетом. Но на наш взгляд издание «Музыка для детей» в полном объеме несомненно фортепианный репертуар детских музыкальных школ.

Считаем, что образ замечательного композитора и тонкого музыковеда Софы Азнаурян хороший пример для музыкантов, только начинающих свой путь. Благодаря трудолюбию можно многого достичь в жизни и профессии. Главное на этом пути – желание и целеустремленность.

ЛИАННА САРГСЯН

студентка 1-го курса кафедры теории музыки  
Ереванского государственного музыкально-педагогического колледжа им.А.Бабаджаняна

## "Музыкальный диалог: Комитас и французские композиторы" во Франции



Гаяне Торосян, Серине-Люба Татевосян, Карине Силионян, Софья Силионян

Уникальный проект специалиста-коуча по французской вокальной фонетике Серине-Любы Татевосян "Музыкальный диалог: Комитас и французские композиторы" был впервые представлен во Франции в рамках месяца Армении в департаменте Isère. По приглашению мэрии города Вьен и под высоким патронатом Министерства Европы и иностранных дел Франции талантливые и перспективные молодые певицы, воспитанницы Ереванской государственной консерва-

тории Карине Симонян и Софья Симонян (класс профессора Р.С. Оджакян) исполнили произведения французских композиторов, чередуя их с песнями Комитаса. В свою очередь, ученики-инструменталисты консерватории города Вьен представили программу из популярных сочинений Комитаса, а детский хор исполнил "Какавик" на армянском языке в сопровождении великолепного концертмейстера Гаяне Торосян. На сцене ца-

рила атмосфера дружбы и творчества как символ единства и диалога двух культур. Проект был реализован при поддержке AGBU-Vienne и компании DONOS.

СЕРИНЕ-ЛЮБА ТАТЕВОСЯН

специалист-коуч по французской вокальной фонетике



Фрагмент репетиции: юные ученики консерватории города Вьен исполняют "Какавик" Комитаса вместе с армянскими солистками в сопровождении концертмейстера Гаяне Торосян



## «Պարույր Սևակը երգերում» նուրանների ժողովածուի շնորհանդեսը՝ Գրականության և արվեստի թանգարանում

Դեկտեմբերի 6-ին, Եղիշե Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում տեղի ունեցավ «Պարույր Սևակը երգերում» նուրանների ժողովածուի շնորհանդեսը, ինչպես նաև ներկայացվեցին Պ. Սևակի խոսքերով գրված երգերից։ Ժողովածուն կազմել է ԵՊԿ պրոֆես-

միջոցներ, բառի հանդեպ առանձնահատուկ մոտեցում։ Հաջորդ պարզաբանի մասին գրել է հենց ինքը՝ Պ. Սևակը՝ ասելով, որ «արդի բանաստեղծությունը չպիտի նայել իրեն սովորական միաձայն երգի, որ ժամանակին է երգային մրաձողության փոխարեն մենք նույնիսկ 5-

ամյակներ շարունակ թևածում են»։

Հանդիսության ընթացքում Պ. Սևակի ստեղծագործությունների հիման վրա ստեղծված երգերը ներկայացրեցին Մարիցա Թիլիկյանը, Լուսինե Օրդուխանյանը և Գիանա Հարությունյանը։ Նվագակցում էր Մարգարիտ Մար-



Մարգարիտ Մարգարյան, Եղիշե Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի տնօրեն՝ Սյուզան Խոջամիրյան



Մարիցա Թիլիկյան, նվագակցող՝ Մարգարիտ Մարգարյան



Մարգարիտ Մարգարյան, Լուսինե Օրդուխանյան

սոր, դաշնակահար Մարգարիտ Մարգարյանը, ով իր խոսքում նշեց. «Պարույր Սևակի բանաստեղծությունների հիման վրա գրված երաժշտական արեղծագործություններն այդքան էլ շատ չեն։ Հավանաբար, հիմնական պարզաբաններից մեկը Սևակի բանաստեղծությունների կառուցվածքն է։ Նա չարունակեց Ա. Բախիանյանի, Հ. Թումանյանի, Վ. Տերյանի «երգայնությունը», այլ իր ոճով առավելապես մոտեցավ Վ. Մայակովսկուն, Ու. Ուիթմենին, Պ. Էյլուարին, ինչն արդեն պահանջում էր կոմպոզիտորներից երաժշտական, մեղեդային նոր որոնումներ և լուծումներ, արտահայտման այլ

10 տողանոց բանաստեղծության մեջ ունենանք սիմֆոնիկ մրաձողություն և միաձայնության փոխարեն՝ բազմաձայնություն»։

Գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյան իր խոսքում կարևորեց այսօրինակ ժողովածուի ստեղծումը, քանի որ «երգիչների և երաժիշտների կողմից մշտապես փնտրված այս գործերն առավել հասանելի կլինեն՝ հանրահոշակելով Պարույր Սևակի սիրային, հայրենասեր և անչափ հուզական արեղծագործությունները, որոնք երգ են դարձել և լրան-

գայանք։

Թատերականացված ընթերցումներով հանդես եկան Տարածաշրջանային 1-ին քոլեջի սաները։ Ասումքոլ Գալանե Սամվելյանը կարդաց Պ. Սևակի բանաստեղծություններից։


«Պարույր Սևակը երգերում» ժողովածուն հրատարակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ։

[https://iravunk.com/?p=299663&l=am&fbclid=IwY2xjawHCPchleHRuA2FlbQlxMAABHZyZjmUgXsiFfbclUDLANKt0oMUysjhtgVFrpxCUp0Uzg20GDh6eklw\\_aem\\_8Tl2XUnxeGta8tjiw3e7LA](https://iravunk.com/?p=299663&l=am&fbclid=IwY2xjawHCPchleHRuA2FlbQlxMAABHZyZjmUgXsiFfbclUDLANKt0oMUysjhtgVFrpxCUp0Uzg20GDh6eklw_aem_8Tl2XUnxeGta8tjiw3e7LA)

## ՓԱՐԱՋԱՆՈՎԸ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակի առիթով ներկայացնում ենք Արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր Սվետլանա Մարգարյանի «Փարաջանովը և երաժշտությունը» հոդվածը՝ տպագրված «Գրական թերթ» երկշաբաթաթերթի N6(2576) 1-15 օգոստոսի 1998, համարում

Նման թեման տրամադրում է Պուշկինը կամ Թումանյանը և երաժշտությունը, կամ գրականությունը (կամ գեղանկարչությունը) և երաժշտությունը ծանոթ համադրությունը։ Բայց ո՛չ Տվյալ դեպքում ուշադրության է ենթակա կինոյի աշխարհի և երաժշտության աշխարհի միջև զուգահեռներ գտնելու հնարավորությունը, որն այդքան խորությամբ զգում էր Սերգեյ Փարաջանովի հանձարը։ Վարպետի արվեստն ինքնին այդ թեմայի շուրջ մտորելու հարուստ նյութ է ընձեռնում։ Այդ մտորումների հիմքում ընկած է՝ Փարաջանովի բոլոր արվեստներն իրենց համադրական միասնությամբ ընկալող գեղարվեստական ձիրքի սինկրետիկ բնույթի առանձնահատկության մասին միտքը։ Իր գործունեության յուրաքանչյուր արտահայտության մեջ նա գտնում էր խառն արվեստների յուրահատկությունները դրսևորելու հնարավորություն։ Այդպիսի դրսևորումների գործընթացը, դաստիարակված վերջնական արդյունքներից, ընթանում էր բացարձակապես բնականոն, այսինքն Վարպետը չէր ջանում բռնի կերպով մի արվեստի ժանրային կարգերը «խցկել» մյուսի պրոկուրատյան մահիճը։ Բայց յուրաքանչյուր արվեստում նա նրբորեն զգում էր դրա գործառական գերազանցությունը և այն որակները, որոնք հնարավորություն են տալիս թարգմանվելու այլ արվեստի լեզվով։ Այդ առումով Վարպետը նրբորեն կռահում էր դարաշրջանի՝ միջառարկայական կապերին և փոխազդեցություններին ուղղված՝ ինչպես գեղարվեստական, այնպես էլ բնագիտական և տեխնիկական ընդհանուր զարգացումը։ Փարաջանովը երաժշտությունն ընկալում էր ինտուիտիվ։ Նրա կինոնկարներում այն ծնվում էր շրջապատող բնության հնչյուններից աղմուկից ու լռությունից, թռչունների դայալից, կենդանիների ձիչերից, մարդկային ձայնից՝ բազմալեզու, բազմերանգ, բազմաբարբառ։ Այսպիսով, Փարաջանովի մեջ երաժշտությունն արարվում է ցանկացած հնչյունից առանձին՝ երաժշտական և ոչ երաժշտական, որը նա ընկալում է բարձրահունչ և թիթիկ տարբերակվածությամբ։ Այդ ամենատարբեր հնչյունները երգեցիկ, գործիքային, խոսակցական, ինչ որ գաղտնախորհուրդ կերպով փոխհարաբերության մեջ են մտնում իրար



հետ հանդիսատեսի վրա գեղարվեստորեն ներգործող մի միասնական հնչյունաշար կազմելով։ Փարաջանովի հետ համագործակցող կոմպոզիտորի մասնագիտական աշխատանքի արդյունքը հաճախ էր կրում այդ շարքը կանոնակարգելու բնույթ։ Բայց, այնուամենայնիվ, ֆիլմի ընդհանուր հնչյունային զարգացման հսկողությունը Փարաջանովին ինքն էր իրականացնում։ Այդ մասին է վկայում երաժշտական ձևավորման դժվարին փնտրտուքը՝ «Նռան գույնը» ֆիլմի առիթով, որի հնչյունային աշխատանքների մի մասը Փարաջանովին ինքն է կատարել։ Ասվածից հետո չի կարելի վերջակետ դնել, քանի որ երաժշտությունը Փարաջանովի մեջ ներկա է ոչ միայն հնչյունի տեսքով։ Այն գոյություն ունի նրա ֆիլմերում երաժշտական կառուցվածքի և զարգացման ներքին օրենքների գործողության տեսքով։ Որպես երաժիշտ, ես առանձին հոդվածում ջանացել եմ վերլուծել այդ օրենքները, հենվելով գլխավորապես նրա ֆիլմերից ամենաերաժշտականի՝ «Նռան գույն»-ի վրա։ Հետազոտական ապշեցուցիչ եզրահանգումները հաստատում են կինոյի և երաժշտության օրգանական կապը, որը

XX դարի տարբեր ռեժիսորների գործերում արտահայտվել է տարբեր կերպ։ Սերգեյ Փարաջանովն այնքան անհատական և կոնցեպտուալ մոտեցավ այդ խնդրի լուծմանը, որ նույնիսկ կինոյի մեծ տեսարան և գործիչ Սերգեյ Էյզենշտեյնի փորձերն իրացված այդ երկու արվեստների սահմանագծում, թվում են փոքր-ինչ միագիծ։ Բնարկե, ժամանակներն ուրիշ էին։ Փարաջանովը, ինչպես և իր հոգեկից եղբայր Անդրեյ Տարկովսկին, զգում էր երաժշտական ստեղծագործության բնույթն իր ներակա տրվածությամբ։ Հասկանալի է, այստեղ խոսք չի կարող գնալ երաժշտական պարտիտուրի և կինոարվեստի նույնականացման մասին՝ իրենց անբողջականության և հետևողականության մեջ։ Սակայն այդ երկու մեծ արվեստագետների համար բանալին գտնվեց լսողական խորհրդանիշերը տեսողականի թարգմանելու ծանապարհով։ Նրանք երկուսն էլ կարողացան կինոնատագրաֆիական միջոցներով փոխանցել որոշ երաժշտական ունիվերսալներ, դրանով իսկ բազմա-կերպով կինոյի գեղարվեստական արտահայտչական երանգապնակը։

Սերգեյ Փարաջանովի հոգևոր աշխարհը չի տեղավորվում ընկալման սովորական չափումների մեջ, քանզի այդ տարածությունը չունի կոնկրետ ժամանակային բնութագիր։ Այն արտաժամանակային է, այն առասպելական է և դրա հետ մեկտեղ չափազանց այժմեական։ Դարի ավանդական գեղարվեստական առաջապահի դիրքերից Փարաջանովն իր ակնհայտ էթնոգրաֆիզմով թվում է փոքր ինչ հնաժոհ։ Բայց շուտով պարզ դարձավ նրա արվեստի ապագան՝ դարերի վրա թևածող և նոր հազարամյակին դիմադարձ։

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՅԱՆ  
Արվեստագիտության դոկտոր, ԵՊԿ պրոֆեսոր  
N 6 (2576) 1-15 օգոստոսի 1998



**«ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, ՄԱՅՐԵՆԻ ԲԱՐԲԱՌ...»**

Այս խորագիյր, Սուրեն ջան, ընտրել եմ քո՝ նաև երևելի բարբառազետ-լեզվաբանի հետազոտական տաղանդը բացահայտելու համար: Ի՞նչ բացահայտում, երբ գիտական գործունեության այդ ոլորտում քո ուսումնասիրությունները հայտնի էին վաղուց: Պարզապես իմ խոսքը հենց այդ մասին է: Բարբառազիտական քո հմտությունները երևակալ-վեցին հատկապես «Ասք Զորավար Անդրանիկի մասին», դյուցազներգությունում, որ կերտել ես, այո, կերտել ես հայրենի Բագրեվանդ-Ալաշկերտի բարբառով, նրա խաստուր-յան խոսքաինքով: Ահա այսպես՝ հայոց բնօրրանի սքանչելի նկարագիր.

«Հին ընդրան Մըշո դաշտը հիճոց, Բանձրոցոց սաքերը, Էն, Սասնո սաքեր, Փեշերու վրա ու ծորերու մեճ, Ծառ ու թուփ, մեղա, վիրու այծյասներ, Գեղեր՝ կախվուց ին ժեռ քարասպներուց, Վանկեր՝ կրպուց ին բանձր սաքերուն, Չորսրոյոր կանանչ, Չորսրոյոր թփուղ, Էն-քան խորողիգ էրգիր ւ Սասուն, Օր գուգիս՝ ընդմիշտ փառք տաս Սարդ-ձուն, Օր առձրվի բուն ւ գրվե հայերուն, Ներքն Մըշո դաշտը, Ներքն Բիգլիս, Վան, Կրպիս՝ դըրախտ էղա ու էղմալ լէ կա»:

Ահա և Ջորավար Անդրանիկի դիմումն իր գինվորներին. «*Քինս ես ու իմ զինվորներ հայ ֆիդայինք, Մենք հեղրում ինք զրվի չորի օրիկն ի մահուն Կրովկ հայու իրավունքի, Հայաստանի համար...*» Ասքի լեզվականաբարբառային որոշ յուրահատկությունների դատերդ՝ Լուսինեի մեկնաբանություններին ես արդեն անդրադարձել եմ համապատասխան տեղում։ Բայց քո «Ալաշկերտի բարբառում» գիտական խոր վերլուծությամբ, այլ բարբառների հետ առնչությունների բացահայտմամբ, տարբեր խոսվածքների համեմատական նկարագրով, մի խոսքով՝ համակողմանիորեն ներկայացնում ես հայրենի բարբառը՝ իր ամբողջ հնայքով։

Ի դեպ, զարմանալի չէ, որ քո համարյա բոլոր գրքերում կամ հոդվածներում, այս կամ այն չափով, այս կամ այն լեզվական խնդրի առնչությամբ, առկա են բարբառա-գիտական տարաբնույթ անդրադարձներ: Խաստուրի բարբառը, մեր պապերի, մեր հարազատ բարբառը վաղուց ուսումնասիրության կարտու էր, հայ ակնասավոր լեզվաբանների՝ բարբառագիտության ոլորտում ներդրած ավանդին ի լրումն: Հայոց տասնյակ բարբառներ արդեն իսկ գրքերի տեսքով, լույս աշխարհ էին եկել, իսկ Կաշկերտի բարբառը սոսկ մակերեսային հիշատակումների շրջանակում էր և սպասում էր իր հմուտ հետազոտողին: Ուրիշ ո՞վ, եթե ոչ դու՜: Էրգրի պապականական լեզվական հարուստ մշակույթի հավատավոր ժառանգորդը պետք է ձեռք գարկեր այդ դժվար առաքելությանը: Բարբառագետի քո ոգեղեն տարերքը «դուրս ժայթքեց» և տարիների համառ ջանքերով ծնվեց «Կաշկերտի բարբառը» ուսումնասիրությունը, որը ատենախոսության պաշտպանությանը՝ քեզ պարզեցեց բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ցավոք, քո այդ աշխատանքը ժամանակին չհրատարակվեց և առ այսօր էլ լույս աշխարհ չի եկել՝ շատ այլ անտիպ գրվածքների շարքում: Բայց ահա ասի՞ր է բացվել, որ գոնե իմ այս հակիրճ անդրադարձով ընթերցողներին ներկայացնեմ այդ հետաքրքիր ուսումնասիրությունը, իբրև քո գիտական դիմանկարի շատ կարևոր հայտանիշ, Էրգրի տարեգրի քո առաքելության ևս մի վկայագիր:

Քո աշխատությունը անվանել ես՝ «Քաղրեվանդի (Ալաշկերտի) բարբառի խոսվածքները Սովետական Յայաստանի տարածքում»: Եվ ի սկզբանե տեղեկագրել ես, որ «*հայ լեզվաբանական և րարբառագիտական գրականության մեջ Քաղրեվանդի բարբառի փոխարեն հիշվում է միայն նրա Մաշկերտի խոսվածքը, որը ներկայացվել է բարբառային փաթեթեր անկարդակներ արտահայտող անուններով՝ գավառաբարբառ, ենթաբարբառ: Քաղրեվանդի փաթածքում հայտնի են հեղեկյա վարչապոնրեսական միավորները՝ Ալաշկերտի, Ղարափյիսայի, Ուշֆիչկետի, Դուրադի, Խամանի գավառակները: Առաջին երկուսի բնակավայրերը բնոգրկում են բուն Մաշկերտի խոսվածքը... Քաղրեվանդի բարբառի կազմի մեջ են մտնում նաև նրա Մրարապյան, Շիրակի, Գուգարքի, Ապարանի և Մարտունու (Սևանի սվազան) նոբակյազմ փաթրեդակները, որոնք զոյալցել են 1818-1822, 1829-1830, 1853-1856, 1877-1878, 1915-1918 թթ. մեծ արազաղթերի և Արևելյան Հայաստանի փաթրեթ գավառակներում բազրեվանդոցիների կենտրոնացման հեղևաներոյ»:*

Այս ընդհանուր դիտարկումից հետո, դու հանգամանալից անդրադարձ ես կատարում Բագրեվանդի հայության հիմնավոր արմատներին, հիշատակում պատմական փաստեր, ուրարտական ժամանակներ, թուրքմեն-թաթարական հրոսակախմբերի դեմ մղած պայքարի դրվագներ:

Ապա աշխատանքի առաջին գլխում տեղեկագրում ես-  
բագրեվանդցիների մեծ արտագաղթերի, Արևելյան Յա-  
յաստանում երանց հիմնադրած նոր բնակավայրերի  
մասին, հայտնի հայ ազգաբազեաների (Ս. Հայկունի, Ե.  
Լալայան, Շ. Ամառյան և ուրիշներ) վկայաբերած փաստե-  
րին հավելում քո դիտարկումները Բագրեվանդի բարբառի

խոսվածքային տարբերակների ու դրանց յուրահատուկ գծերի վերաբերյալ: Երկրորդ գլխում ներկայացնում են բարբաթի և խոսվածքների հնչյունային համակարգի յուրահատկությունները՝ առանձին-առանձին, իսկ երրորդ գլխում՝ ձևաբանության տարբերը՝ թվի, հոլովի, սեռի, դրանց տեսակների, բառակազմությունների, խոնարհումների, շարահյուսական և այլ լեզվական-բարբառային իրողություններ՝ համապատասխան օրինակներու: Դրանց անդրադառնալիս մեր կողմից չափազանց մեծ տեղ կգրավեր, քանզի դու, Սուրեն ջան, մի քանի տասնյակ էջերում, մանրամասնորեն, գիտական խոր վերլուծությամբ ներկայացրես եւ Բագրեվադեի բարբառին և նրա տարբեր խոսվածքներին առնչվող առկա բոլոր խնդիրները: Եվ աշխատանքի վերջում էլ տեսական ասելիքը ամրագրել ես բուն Ալաշկերտի խոսվածքի նմուշներով՝ զրույցներ, առակներ, ժողովրդական երգեր, սիրո երգեր և այլ ժանրերի գործեր՝ Հայաստանի տարբեր շրջաններում ապաստանած բազմահամայնիկների ու նրանց ծառանգորդ ասացողների անուն-ազգանուններով: Ներսիսյան չե նաև հատվածներ «Սասնա ծռեր» էպոսից՝ նույն՝ Ալաշկերտի խոսվածքով:


**«Անթափ-Այնթափ» պատմաբանասիրական  
Ճշգրտումներ»**

Քո բազում արժեքավոր գիտական հրապարակումների և ուսումնասիրությունների շրջանակից ուզում եմ առանձնացնել ևս մեկը՝ «Անթափ-Այնթափ» պատմաբանասիրական ձեզգրտումներ» ծավալուն հետազոտությունը, որ տպագրվել է Բելյուրի «Հայկազեան հայագիտական հանդէսի» 1981-ի Թ-հատորում՝ արևմտահայերեն, և նրա առանձնատիպ տարբերակը ահա իմ գրասեղանին է։ Սիյուրքահայ այս պարբերականում քո հետազոտության տպագրումը ընդգծում է նրա կարևորությունն ու հետաքրքրությունը նաև Հայաստանից անդին։ Եվ քանի որ քո «պատմաբանասիրական ձեզգրտումներուն» գերակշռողը Այնթափի բարբառի քառյային շերտերի, լեզվական այլ դրսևորումների ստուգաբանության հարցերի անդրադարձն է, ճիշտ համարեցի քո այս աշխատության իմ անդրադարձն էլ ներառել «Լկաշեկերտի բարբառը» առենախտության շրջանակներում։

Այս թվացյալ «նեղ» թեման, պարզվում է, քեզ այնքան է հուզել, որ որոշել ես «պատմաբանասիրական ճշգրտումներ» անել: Իսկ առիթը «Այնթափի Հայրենակցական միութեան» հիմնադիր անդամներ, մասնավորապես պրոֆեսոր Գևորգ Սարաֆյանի նախաձեռնությամբ 1953-ին լույս ընծայված «Պատմությունիս Ամթելյի խաղ» երկհատույրյա աշխատությունն է, որտեղ, ամենայն «նսնրամասնությունամբ» ոգիական բարեխղճությամբ պրոտել են Այնթափի և նրա շրջակա փարածքի պարմաաշխարհագրական նկարագիրը, բարձր է գնահատում այնթապցիների ներդրած ավանդը գիյություն և գրականություն, ինչպես նաև փրկական կառավարման ու արիւնաբոլորություն գարգացման բնագաարներուն, գերելոյում ու մասնակի քնություն են ենթարկում գրի առնում բարբարային ու քանակական արժեքները, զգալի փրել է յարկացում նաև թորք ցելապանների դէմ գէնքը ձեռքին կոռող հայ մարդկանց սիրաքնների փառարանմար: Աշխատություն երախարարող հեղինակներն այդ րոյրով հանդերձ՝ միաժամանակ եփարարաններնջ մի պակ են հիւսել՝ նուիրելով անհավասար մարդերուն ընկած հայ քաջորդիների ու հազարաւոր անմեղ գոհերի խնկելի յիշարարիւն»:

Այսպես՝ ինքը էլ դրվատեցով ու խնկարկեցով «Պատմություն Անթեպի Յայոց»-ի հեղինակների հայրենանվեր ջանքերը տարբեր աղբյուրներից և այնպեսփյոնների սերունդներից գրառած փաստագրական նյութերի հավաքման, ամբողջացման գործում, նշում են, որ «լրանք վերջնականապես յանգում են այն եզրակացության, որ իրենց նախնիները եկել են շրջակա բնակավայրերից, մասնաառուարյան *Այնթափից*»։ Այս փաստը վերահաստատելով, դու ընդգծում են քո ուսումնասիրության նպատակը՝ «հենց սա էլ մեզ համար դարձել է կրունն Այնթան և Այնթափ քարտրաշաին միավորների պարբերական համար և, յենուելով իրեն *Այնթափի՝* րուն Այաշկերտի խոսվածքի քարտաշային և բանախրական հարուստ փաստերի վրայ՝ պարածանանակեայ կրթվածքով նմանաբական քննութեան ենք ենթարկել և ցոյց տուել նրանց միշն եղած ընդհանուր գծերն ու պարբերությունները»։

Դու, Սուրեն ջան, համամիտ ես բոլոր այն ուսումնասիրողներին, հետ, ովքեր Յին Անտապի և Այնթափ քաղաքի անունների մեջ տեսնում են ընդհանուր եզրեր, և ինքդ էլ այդ երկու բարբառների միջուկի «ստուգաբանության և համեմատական վերլուծության միջոցով» հանգում ես այն եզրակացության, որ բարբառային տվյալ միավորները աս-սերվել են նույն հիմքից: Այս մեկնարկներից էլ շարադրել ես քո աշխատության հինգ գլուխները՝ «Այնթափ տեղանունի հարցի շուրջ», «Այնթափ», «Բանասիրական ճշգրտուն-ներ», «Յիշատակարաններում պահպանուած բարբառային



Բանասիրական գիտությունների դոկտոր, գրականագետ Լյուդվիգ Կարապետյանի սույն գիրքը ներկայացնում է անվանի գիտնական, բանագետ, գրող Մուրեն Մահալյանի կյանքի, գիտական-ստեղծագործական գործունեության հասկացողությունը:

Սուրեն Մուշեղի Սահակյանը ծնվել է 1930-ին Թալինի Միջնաձոր գյուղում: Նրա ծնողներն այստեղ են հաստատվել՝ 1918-ին բռնազավթող էնթարկվելով Էրզրի Այաշ-կերտ գավառի Խատտոր գյուղից: Միջնակարգ կրթությունն ստացել է Թալինի միջնակարգ դպրոցում, ապա տեղափոխվելով Երևան՝ սովորել և ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ համալսարան) բանավարկյան ֆակուլտետը: Արմավիրի (նախկին՝ Ղուկտեմբերյան) գյուղերի դպրոցներում աշխատել է մայրենի լեզվի ու գրականության ուսուցիչ, ուսումնական մասի վարիչ, ապա տեղափոխվել է Երևան և իր մանկավարժական գործունեությունը շարունակել տեխնիկոններում: 1974-ից աշխատանքի է անցել Հայկական մանկավարժական ինստիտուտում, սկզբում՝ «Մանկավարժ» թերթի պատասխանատու քարտուղար, այնուհետև դասավանդել է հայոց լեզու և բարբառագիտության, միաժամանակ ղեկավարել բարբառագիտության կաբինետը: Այդ տարիներին նաեռանդուն գիտվում է նաև բանասիրական նյութերի հավաքմամբ և ուսումնասիրմամբ՝ պարբերաբար իր ուսանողների հետ կատարել բանահավաքչական գիտաբաշխումներ՝ Հայաստանի քաղաքներում ու գյուղերում, գրաթել բանասիրական տարածքներ նյութել: Հիմնադրել և խմբագրել է «Հայագիտական հանդես» գիտական հրապարակումների արժեքավոր ժողովածուն, ինչպես նաև «Բագրեվանդ թերթը»: Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում համառոտաբանող աշխատել է նաև բանավարկյան ֆակուլտետի ղեկին: «Արշակերտ բարբառը» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա և արժանացել դոցենտի կոչանք: Հռոլինակ է գիտական մի շարք ուսումնասիրություններ ու բազմաթիվ տարաբնույթ հոդվածներ՝ հայագիտական կարևոր խնդիրների մասին: Աշխատանքային գործունեության ընթացքում հրատարակվել են նրա «Հակոբ Հարությունյան» դիմանկար-վավերագիրը անվանի փիլիսոփա-բանագետի մասին (1965), «Հերոսապատում» պատմահայրենասիրական ասքապատումների ժողովածուն (1990), «Այս Անդրանիկ Ջորավարի մասին» վիպաբար (1990, 2007), «Հայկական հնագույն ռազմախաղեր» պատմաբանասիրական-ագագագրական ակնարկների զիբբը:


Կյանքից հեռացել է 2003-ին:

բառերի ստուգաբանությին», «Բառարան»:

Որքան էլ քո «բանասիրական ճգրտումներն» ու բարբառային մանրամասն ստուգաբանությունները հետաքրքիր են բուն՝ ընդ հուզող թեմայի բազմակողմանի անդրադարձի տեսակետից, կներես, տվյալ դեպքում նույն սկզբունքով ընթերցողների այդ ամենն իմ ներկայացնելը տվյալ դեպքում անհրաժեշտություն չեմ համարում, և այն գիտական «նեղ» շրջանակների տիրույթում է, և «Մետապ»-«Կյնթապ» անունների՝ վերը հաստատագրած եզրահանգումը ընդունում ենք ի գիտություն՝ որպես քո՝ գիտական-բանագետի լայն հետաքրքրությունների ևս մի վկայագիր:

**ԼՅՈՒՂՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**  
**Քանասիրական գիտությունների դոկտոր,**  
**գրականագետ**







# Լոնդոնի Թագավորական երաժշտական ակադեմիան՝ օպերային երգիչ Տիգրան Քախվեջյանի համար համաշխարհային բեմերը նվաճելու երազանքին հասնելու ուղի

Համաշխարհային բեմերը նվաճելու երազանքը, ուժեղ կամքն ու ցանկությունը Տիգրան Քախվեջյանին տարան Լոնդոն՝ Թագավորական երաժշտական ակադեմիա (Royal Academy of Music): Ակադեմիայում սովորելու ընթացքում երիտասարդ արտիստը հզոր ձայնի և բեմական մեծ տաղանդի շնորհիվ հասցրեց աչքի ընկնել և սիրվել ոլորտում:

Միջազգային մի շարք բեմերում ելույթ ունեցած և Լոնդոնի Թագավորական երաժշտական ակադեմիայից Բրիտանական երիտասարդական օպերայի բեմում հայտնված երիտասարդ օպերային երգիչը հասցրեց գրավել նաև *The Guardian*-ի ուշադրությունը՝ հայտնվելով հայտնի պարբերականի էջերում:

Կյանքն առանց երաժշտության չպատկերացնող արտիստի հետ «Արմենպրես»-ը գրուցել է երաժշտական ուղղվածության ընտրության, Հայաստանից դուրս կրթությունը շարունակելու որոշման, Բրիտանական երիտասարդական օպերայի բեմում հայտնվելու և ապագայի պլանների մասին:

Դեռ վաղ տարիքից Տիգրանը հավասարապես սիրել և զբաղվել է արվեստի երկու ուղղվածությամբ՝ նկարչությամբ և երաժշտությամբ: Արտիստի խոսքով՝ իր ամբողջ կյանքի ընթացքում երբևէ որևէ մի ձյուղը բաց չի թողել, դրանք միշտ միմյանց լրացրել են:

«Երաժշտական դպրոցն ավարտելուց հետո ոլորեցի ընդունվել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «Ճարտերի որհայն» բաժինը, հաջորդ ցարի զուգահեռ ընդունվեցի Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Երկու բուհերում էլ ավարտելով բակալավրի աստիճանը՝ մագիստրոսական շարունակեցի Կոնսերվատորիայում, որտեղ երկրորդ կուրսում «Էրագմուս» ծրագրի միջոցով մեկ սեմնար սովորեցի Շուրյանդիայի թագավորական կոնսերվատորիայում: Մյուսով սովորելու ժամանակահատվածում եղա նաև Մագիստրոս, որը օպերային երգիչների համար սովորելու և կայանապու լավագույն վայրերից մեկն է:

Վերադարձա Հայաստան, հարակ ոլորեցի ու դիմեցի Մագիստրի բոլոր կոնսերվատորիաներին, ի ուրախություն ինձ՝ ընդունվեցի Շուրյանդիայի կոնսերվատորիա և Լոնդոնի Թագավորական երաժշտական ակադեմիա (Royal Academy of Music), որը լավագույնն է Մագիստրոս: Շար սիրելով Շուրյանդիան ու իմ արդեն ծանոթ ուսուցիչներին, ղեկավարներին, այնտամենայնիվ, ոլորեցի գնալ Լոնդոնի Թագավորական ակադեմիա, որտեղ սովորեցի ծանրաբեռնված ու ինքնենսիվ մագիստրոսական մեկ տարվա ծրագիր», – նշեց Տիգրան Քախվեջյանը:

Ինչպե՞ս երգիչը հայտնվեց բրիտանական բեմում: Խոսելով Բրիտանական երիտասարդական օպերայի բեմում հայտնվելու հնարավորության մասին՝ Տիգրանը պատմեց, որ շատ պատահական այնտեղ մասնակցել է լսումների և ընտրվել է գիսավոր դերերից մեկը մարմնավորելու համար:

Կարևորելով այս հնարավորությունը՝ արտիստը նշեց, որ այն հարթակ է երիտասարդ օպերային երգիչների համար, որպեսզի կարողանան իրենց ներկայացնել որպես երգիչ, արտիստ, քանի որ այնտեղ հրավիրված են լինում ոլորտի շատ կարևոր մարդիկ՝ ղեկավարներ, գործակալներ, մասնագետներ, որոնց պատահական որևէ այլ տեղ չես հանդիպի: Շատ մեծ է հավանականությունը, որ այդ մարդիկ որևէ արտիստի բեմում հավանեն ու հրավիրեն կարիերան իրենց մոտ շարունակելու:

«Ընտրվում եմ Բենջամին Բրիտենի «Լուկրեցիայի բռնաբարությունը» (The Rape of Lucretia) օպերայում Թարբուի-նիոսի կերպարը մարմնավորելու համար, որը համարվում է գլխավոր դեր, քանի որ այս պարմությունը ցուղի է ունենում հենց իմ մարմնավորած կերպարի պարճառով: Մյայես շար պարահական հայրնվում եմ այդ բեմում, ինչը շար կարևոր էր ինձ համար», – ասաց օպերային երգիչը:

Տիգրանն ընդգծեց՝ սրանով չի սահմանափակվելու, քանի որ նպատակ ունի վերադառնալ Լոնդոն՝ ուսումը շարունակելու, ինչպես նաև Եվրոպայում տարբեր երիտասարդական ծրագրերի միջոցով կատարելագործվելու և լավագույն բեմերում ելույթ ունենալու համար:

Երգիչը մեզ հետ կիսվեց նաև «Լուկրեցիայի բռնաբարությունը» (The Rape of Lucretia) օպերայի փորձերի հետաքրքիր դրվագներով: Նա ժպտելով ինչեց, թե ինչպես վերջին փորձի ժամանակ կար տեսարան, որտեղ Լուկրեցիային մարմնավորող աղջիկը պետք է հարվածեր իրեն, իսկ հարվածն այնքան ուժեղ է լինում, որ վնասում է երգչի կողոսկրը:

«Սկզբում չպարկերացրեցի լրջությունը, բայց ցավերը գնալով ուժեղացան: Հաջորդ օրը՝ ներկայացման պրեմիերայից առաջ, արիպված գնացի բժշկի ու պարզվեց, որ ձաք ունեմ: Մյդ օրը ներկայացման ժամանակ հենց այդպես էլ երգեցի, գործընկերուհուս չէի ասել, որ տրանսպորտները չիացնեն, բայց պայմանավորեցիք, որ ինքն էլ ինձ չի հարվածի, ուղղակի կձեռնարկեմ: Երանանում շար դժվար էր, չէի կարողանում խորը շունչ քաշել, ցավազրկող խմեցի, որ կարողանայի երգել», – պատմեց Տիգրանը:

Օպերային ուղղվածության ընտրությունը: Երիտասարդ արտիստը երաժշտական ուղղության ընտրությունը շատ դժվարությամբ է կայացրել, քանի որ շատ է սիրում և երբեմն կատարում է նաև էստրադային երգեր՝ Շառլ Ազնավուր, Անտ Բաբաջանյան, Ֆրենկ Մի-նատրա:

«Ազնավուրի ծննդյան 100-ամյակի առիթով շուրով կներկայացնեն նրա մի քան երգերից, կլինի նաև տեսահոլովակի պրեմիերա: Իսկ ինչ վերաբերում է օպերային, ես միշտ ասել եմ, այն մի ուրիշ աշխարհ է, իսկ օպերային երգիչ լինելը միայն երգելը չէ, դու պետք է լինես նաև շար վարժ ու պրոֆեսիոնալ դերասան, որ կարողանաս կոնցիաները փոխանցել հանդիսատեսին», – ընդգծեց Տիգրան Քախվեջյանը:

Նա նշեց՝ իր համար ոգեշնչման աղբյուր է եղել այժմ աշխարհում ամենահայտնի տենորներից մեկը՝ Յոնաս Կաուֆմանը, իսկ հայ արտիստներից միշտ օրինակ են եղել և իր կայացման մեջ մեծ ներդրում են ունեցել դասախոս, գործող լավագույն բարիտոններից Անտոլ Բոչարյանը, տենորներ Արսեն Մոդոնոյանը և Լիպարիտ Ավետիսյանը:

Երաժշտության հանդեպ անսահման սիրուց, տարիների մեծ աշխատանքից ու փորձառությունից ելնելով՝ Տիգրանը այս ոլորտն ընտրող երիտասարդներին խորհուրդ տվեց հավատալ սեփական ուժերին և լսել սրտի ձայնը:


«Եթե իրոք սիրում եմ թարրունն ու օպերային երաժշտությունը և լավագույն արդյունքին հասնելու համար աշխատում եմ այնքան, ինչքան անհրաժեշտ է, անհնար է ինչ-որ լավ ձեռքբերում չունենալ: Կոնկրետ օպերային արվեստը շար անձնագոհ ու բարդ ձյուղ է, դու պետք է շար-շար բաներից քեզ գրկես ձայնդ չապառելու համար, բայց վստահապու ոչինչ չկա, եթե սիրում ես», – ասաց նա:

Իսկ լավ երգիչ, արտիստ լինելու համար, ըստ օպերային երգչի, առաջնայինը երաժշտական լինելն ու սեփական ձեռագիրն ունենալն է: Նա նշեց՝ իհարկե, դասական երաժշտության մեջ փոփոխություններ չես կարող անել, բայց ցանկացած նոր բան ձիշտ մատուցելու պարագայում միշտ էլ կընդունվի և կսիրվի:

«Մյուսեղ շար կարևոր է, երբ խորանում ես բառերի մեջ, վերյունում ու գլխում ես քո դերը ձիշտ մալուցելու ձեր: Եթե տեսարք բառ առ բառ չհասկանաս ու չկարողանաս ինքդ վերյունել ու քո միջով անցկացնել, չես կարողանա ձիշտ մալուցել կերպարը: Չես իմանա որտեղ ժպտա, որտեղ տխուր լինես, որովհետև սա նաև թարրունն է, որտեղ ձիշտ տեսարք, իսկ դա շար դժվար է: Բայց ես ընտրել եմ այս ձանապարհը, որովհետև ինձ չեմ պարկերացնում առանց երգի: Իմ կյանքը միշտ ընթացել է արվեստի երկու ձյուղերի հետ՝ նկարչության և երաժշտության, ես միշտ նկարելով երգել եմ, երգելով նկարել եմ, իմ առօրյան միշտ այսպես է եղել: Մյ կերպ չեմ պարկերացնում:

Երաժշտության դերը Տիգրանի կյանքում: Անդրադառնալով իր կյանքում երաժշտության դերին՝ օպերային երգիչն ընդգծեց, որ այն իր համար կյանքի իմաստ է. «Ես չեմ պարկերացնում ինձ առանց երաժշտության, երբեմն մրաժում եմ՝ ինչքան դժվար է այսօր երաժշտությամբ զբաղվելը, որովհետև այս պահին աշխարհում շար եմ լավ երաժիշտներ, երգիչներ, ու պետք է ինչ-որ մի առանձնահատկություն ու ձեռագիր ունենաս, որ կարողանաս տարբերվել բոլորից, իսկ դա շար դժվար է: Բայց ես ընտրել եմ այս ձանապարհը, որովհետև ինձ չեմ պարկերացնում առանց երգի: Իմ կյանքը միշտ ընթացել է արվեստի երկու ձյուղերի հետ՝ նկարչության և երաժշտության, ես միշտ նկարելով երգել եմ, երգելով նկարել եմ, իմ առօրյան միշտ այսպես է եղել: Մյ կերպ չեմ պարկերացնում:

Երիտասարդ երգիչը դեռևս հստակ չի պատկերացնում ապագայում որտեղ է լինելու, բայց հույս ունի՝ կհայտնվի



Տիգրան Քախվեջյան, Ռու Քամինգ



Տիգրան Քախվեջյան, Մերսանդրա Մուն, Տեսարաններ Բենջամին Բրիտենի «Լուկրեցիայի բռնաբարությունը» օպերայից



մի միջավայրում, որտեղ զբաղվում են լավ երաժշտությամբ՝ լինի դա էստրադային, թե օպերային, կզբաղվի սիրելի գործով և երբեք կայացրած որևէ որոշման համար փոշմանելու առիթ չի ունենա:

ԳԱՅԱՆԵ ԳԱՐՈՅԱՆ  
<https://armenpress.am/hy/article/1203784?fbclid=IwY2xjawGZWEtleHlRuA2FlbQlEwMQABHUVxqRf1In7Tn2lOKFv7Mu9IRTojKPTKL0>



## «Դաշնակահարի արվեստը. երեք պարբերություն»

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան առաջին անգամ ընդունել է «Էրազմուս+» շարժունության ծրագրի ուսանողի: Նորվեգիայի Կրիստիանսանդ թաղաքի Ազդեր համալսարանից դաշնակահար Ակսել Դուեդեդի համար Երևանյան կոնսերվատորիայում առանձնահատուկ է դասախոսի նվիրվածությունը ուսանողին: «Ամենաարարելիոր մեր կրթական համակարգերում, կարծում եմ, մասնագիտական շփումն է, որ դասախոսներն ունեն իրենց ուսանողների հետ: Նրանք շատ ժամանակ են լրափառում մեզ հետ աշխատանքին, ինչն, իմ փորձով կարող եմ ասել, նվիրում է ուսանողների հանդեպ՝ մի բան, որ հալոսկ չէ Նորվեգիային: Մյուսը դա պարզապես աշխատանք է, իսկ այստեղ դասախոսները դասից դուրս, կարծես օրվա մեծ մասը աշխատում են ուսանողների հետ, և առանց վարձարժրության ակնկալիքի», – խոստովանել է նա:

Ուսումնառության ավարտին, «Դաշնակահարի արվեստը երեք պարբերություն» խորագրով, Անտո Բարաջանյան համերգասրահի ներքնահարկում Ակսել Դուեդեդը հանդես եկավ համերգային ծրագրով, ներկայացնելով դաշնամուրային երկացանկի երեք ասպարեզ՝ մենանվագ, կամերային անսամբլ, նվագակցություն: Այն կազմակերպվել էր ԵՊԿ կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի «Արվեստի մենեջմենթ» դասընթացի շրջանակներում՝ դասախոս դաշնակահար, Հայաստանի պետական ֆիլիարմոնիայի գլխավոր պրոդյուսեր Արմեն Մանայանի նախաձեռնությամբ: Ծրագրում ընդգրկված ին հետևյալ ստեղծագործությունները՝ մենանվագ՝ Յ. Ս. Բախի «Պրելյուդ և Ֆուգա» դո մինոր, LS4 2, Ֆ. Շոպեն «Պոլոնեզ» սո. 44, Ֆա դիեզ մինոր, Ս. Ռախմանինով՝ «Էտյուդ-պատկեր» սո. 33, մի բեմով մինոր, կամերային անսամբլ՝ Յ. Բրանս՝ Դաշնամուրային քառյակ թիվ. 1 սո. 25, Է. Գրիգ՝ «Չորս նորվեգական պար», սո. 35, նվագակցություն՝ Ռ. Շուման՝ «Liederkreis» սո. 39, Ս. Ռախմանինով՝ «Ռոմանս» ձայնի և դաշնամուրի համար, Վ. Ա. Մոցարտ՝ «Արիա» ձայնի և դաշնամուրի համար, Կոմիտաս՝ «Կոռնկ» ջութակի և դաշնամուրի համար:

Համերգին մասնակցում էին՝ Եվա Մարկոսյանը (ջութակ), Հասմիկ Խաչատրյանը (ջութակ), Անդրանիկ Աղաջանյանը (թավջութակ), Սոնա Թուրաթյանը (պառ), Դիանա Հարությունյանը (սոպրանո), Ժամին Առուշանյանը (դաշնամուր), մենթորներ՝ Նաիրա Հակոբյան (դաշնամուր), Իրինա Բադալյան (կամերային անսամբլ), Մարգարիտ Մարգարյան (նվագակցություն):

Ակսել Դուեդեդի մասին կարծիքներ են հայտնել ԵՊԿ դասախոսները. «Նորվեգիայից ժամանած ուսանող Արսել Դուեդեդը ունի գերազանց երաժշտական ընդունակությո-

ւուններ, զարգացած երաժշտական ինտուիցիա, բավականաչափ տեխնիկական պարարավածություն: Շատ աշխատանք է և ուշադիր, ջանասիրաբար կատարում է մենթորի առաջադրանքները և խորհուրդները: Բավականին կարճ ժամկետում պարզապես բարդ և ծավալուն ծրագիր, ներկայացնելով այն իր մենահամերգին: Կարողացավ յուրացնել իր համար նոր առաջարկներ և մեկնաբանություններ: Ցանկալի կլինեք, որ շարունակի նման բեղմնավոր աշխատանքը, նոր հմրություններ ձեռք բերելու համար», – նշել է ԵՊԿ պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը:

“Аксель Дюед – студент из Норвегии, с которым я с удовольствием поработала три месяца. Оказалось, что в норвежской консерватории нет аккомпанемента как отдельного предмета, и потому он попросил специализироваться по вокальному аккомпанементу, так как время от времени он аккомпанировал инструментальные произведения, а по вокальным произведениям опыта у него не было. Мы выбрали Моцарта, Шумана, Рахманинова. Уроки были очень интересными, насыщенными, Аксель всё впитывал как губка, а для любого преподавателя это самое главное составляющее в работе со студентами. Мы не просто работали над звуком, словесными текстами, образами, а старались вместе найти возможно правильную интерпретацию данного произведения. Во время концерта Аксель также сыграл “Крунк” Кохитаса в скрипичной версии, благодаря чему у нас была интересная беседа о Кохитасе, о его роли в армянской музыке и конечно о трагической истории армянского народа. Пьеса была исполнена очень искренно и с большим чувством, что было достойно оценено публикой. Жаль, что времени для общения было не так много, но я очень надеюсь, что смогла внушить ему любовь к моей сложной профессии и дать те зерна знаний, которые помогут ему в будущем использовать в работе аккомпаниатора. Удачи тебе, Аксель!!”, – ասել է ԵՊԿ պրոֆեսոր Մարգարիտ Մարգարյանը:

«Էրազմուս» կրթական ծրագրով Երևան ժամանած և 1 կիսամյակով ԵՊԿ-ում մագիստրոսականի 2-րդ կուրսում սովորող նորվեգացի Ակսել Դուեդեդը հանդես եկավ հերթաբերի համերգային ծրագրով: Չնայած նրան, որ մեր տեղացի ուսանողներն այդ կիսամյակում չեն հանձնում քննություն, այլ ունեն կոլոկվիումի և թերթից հանպարտարի ընթերցման արուզարք, Ակսելն իր դասախոս՝ կոնցերտմայստրության ամբիոնի պրոֆեսոր Մարգարիտ



Մարգարյանի նախաձեռնությամբ, պարրասարել էր հերթաբերի ծրագիր: Նա ունկնդրին ներկայացրեց Մոցարտի, Շումանի և Ռախմանինովի վոկալ սերիոզացործություններ և Կոմիտասի «Կոռնկը» ջութակի համար: Սկսելը մեծ ոգևորությամբ և մեծ հաճությամբ էր կատարում իր առջև դրված խնդիրները: Նա նվագակցեց մենակատարներ՝ Դիանա Հարությունյանին (սոպրանո) և Հասմիկ Խաչատրյանին (ջութակ): Շատ փայլավորիչ և զովելի էր երիտասարդի այդ մեծ ձգվումն ու աշխատասիրությունը, որը կարճ ժամանակի ընթացքում պարրասարեց և ունկնդրի դարին հանձնեց Մոցարտի «Ֆիդելիտի» արիան «Cosi fan tutti» օպերայից, Շումանի «Liederkreis» Օր. 39, Ռախմանինովի «Ռոմանս» Օր 21, № 11 և Կոմիտասի «Կոռնկը»: Նա իրեն ցուցադրեց որպես ոճային փարբերությունները ըմբռնող, մենակատարին ճիշտ զգացող, լսող, միգուցե, դեռ ոչ կայացած, բայց կայացման ճանապարհին անցնող և ապրիճանաբար վարպետացող դաշնակահար-կոնցերտմայստրեր: Նրա դրական և ռոմանտիկ կերպարը գերեց դաշինձում գրվածություններին, որոնք Ակսելի կատարումներն ընդունեցին մեծ ջերմությամբ և համակրանքով: Շատ ոգևորող և զովասանքի արժանի էր նրա կատարած հակապական աշխատանքը, սերն ու ձգվումն է՛լ ավելի կատարելագործվելու, սովորելու և ձեռք բերելու նոր հմրություններ: Ցանկանք նրան, իր հայրենիք վերադառնալուց հետո, չմոռանալ և օգրագործել մեր երկրում սրացած նոր գիտելիքներն ու փորձությունը, – նշել է ԵՊԿ դաշնամուրային ֆակուլտետի կոնցերտմայստրության ամբիոնի վարիչ, դոցենտ՝ Զարուհի Ղազարյանը:

Նյութը պարրասարել՝  
ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

## «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



Լուսինե Սահակյան

✧ ԵՊԿ Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը նոյեմբերի 27-ին, Հայ-սլավոնական համալսարանում ներկայացել է Կոմիտասին նվիրված դասախոսությանը:

Երաժշտագետին հրավիրել էր համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնը՝ վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գայանե Գևորգյանի ղեկավարությամբ:

✧ Յ. Ս. Բախից հետո պոլիֆոնիկ շարքին անդրադարձել են Դ. Շոստակովիչը, Պ. Հինդեմիտը, Ռ. Շչեդրինը: Հայ կոմպոզիտորական արվեստում արդեն գոյություն ունի նմանատիպ երեք ցիկլ՝ Գայանե Չերտաթյանից, Էրիկ Հարությունյանից հետո, այսօր ներկայացվեց հայ երաժշտական իրականության մեջ բուն գործունեություն ծավալող եզակի երաժիշտներից մեկի՝ կոմպոզիտոր, գիտնական, մանկավարժ՝ ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնի պրոֆեսոր Միխայիլ Կոկժանի «Վիտրաժներ և որմնակարներ» շարքը:

Դաշնամուրային պոլիֆոնիկ ցիկլի շնորհանդեսի, որը տեղի ունեցավ դեկտեմբերի 2-ին, Ա. Բարաջանյան համերգասրահի ներքնահարկում, ներածական խոսքով



Միխայիլ Կոկժան, Իրինա Բադալյան, Լուիզա Կուսրանյան, Մերի Շարբաթյան, Նարե Սուրխաթյան, Թերեզա Մարկոսյան, Ռուզաննա Սրեփանյան

հանդես եկավ ԵՊԿ Երաժշտության տեսության ամբիոնի վարիչ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ռուզաննա Ստեփանյանը: Որպես իր խոսքի բնաբան նա հիշեց Էդվարդ Միրզոյանի արտահայտությունը՝ «*Баи есть что сказать и вы умеете это делать*»,– Երրորդ Սիմֆոնիայի պրեմիերայից հետո հեղինակին ուղղված արձագանքը Միխայիլ Կոկժանի ամբողջ կյանքի ուղեկիցը դարձավ:

Շնորհանդեսին Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Իրինա Բադալյանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ դաշնակահարներ՝ Լուիզա Կուստանյանը, Մերի Շարբաթյանը, Նարե Սուրխաթյանը և Թերեզա Մարկոսյանը հնչեցրեցին հառվածներ 2024 թվականին լույս տեսած ժողովածուից:

Դաշնամուրային ժողովածուն բովանդակում է ծրագրային մանրանվագներ՝ Պրելյուդիա, 15 Ֆուգա («որմ-

նանկարներ»), 14 Ինտերմեդիա («Վիտրաժներ») և Պոստյոդիա: Ստեղծագործությունը նախատեսված է «Պոլիֆոնիա» դասընթացն ուսումնասիրող կոմպոզիտոր, երաժշտագետ, խմբավար ուսանողների համար:

✧ Դեկտեմբերի 3-ին, ԵՊԿ-ում կայացավ Բարաջանյան միջազգային ֆոնդի Հյուսիսային Ամերիկայի ներկայացուցիչ, Մոնրեալի ՄքքԳիլ համալսարանի (McGill University) դոկտորանտ, ջութակահար Նունե Մելիքյանի հետ հանդիպումը: Երաժիշտը ներկայացրեց «*Arno Babadjanian: An Armenian Be-at in Soviet Time*» գրքի



Նունե Մելիքյան

ստեղծման ընթացքը, առանձին մանրամասներ, պատմեց մասնագիտական համագործակցության օրինակների մասին: Նունե Մելիքյանը հայտնեց, որ կշարունակվի հրատարակչի՝ New Mag-ի հետ աշխատանքը և գրքի հայերեն, ֆրանսերեն թարգմանված տարբերակները լույս կտեսնեն հաջորդ տարի: Ռեկտորի պաշտոնակատար՝ դոցենտ Ծովինար Մովսիսյանը ողջունեց նման աշխատանքի հրատարակումը և նշեց, որ մեծ սիրով կծանոթանա գրքին: «Նախևառաջ Դուք հայացք եք դրսից: Մի կողմից կապված չեք Խորհրդային ժամանակի հետ, Չեք մոլորեցումը թարմ է, որպես արևմտյան դասարարականության, լսողության հերթադրող, ով լավ գիտի՝ ինչպես են ընկալում այս երաժշտությունն այսօր, ինչը իրենց կիներաբերի: Մենք, լինելով՝ ներսում, խմանալով արվեստագետներին ու իր ժամանակի հետ նրա բոլոր կապերը, գուցե ավելի կաշկանդված ենք եղել՝ Բարաջանյանին դիտարկել որպես ա-



«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

8 **Ոսնձնահաարուկ երևույթ: Իսկ նա արժանի է դրան. շար է փայրերսլուում, ունի ինքնատիպ ձեռագիր ու բացառիկ փա-դանդ:**

Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ՝ դոցենտ Լուսինե Սահակյանը ընդգծեց, որ շատ լավ գործ է արվել. արժեքավոր կլինի հանրահռչակել մեր հեղինակներին դրսի արվեստագետի աչքերով:

✧ Դեկտեմբերի 5-ին, ֆրանսահայ պատմաբան, հայագետ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան ան-



Ծովինար Մովսիսյան, Արմեն-Կող Մուրաֆյան

դամ Արմեն-Կող Մուրաֆյանը կոնսերվատորիային նվիրեց իր հայրիկի՝ Զարեհ Մուրաֆյանի (1907-1980) «Կոմիտաս» կտավը:

Եղեռնը վերապրած, Հայրենիքը միշտ սրտում պահած ու Հայրենիքով երջանկացած արվեստագետի՝ «Մուրաֆյանի գրեկտնձը հարում է ինքնակառուցման, խոսում է ջերմ, հնչեղ զույններով... Կարմիր, դեղին, կանաչ փայլերով գույնավորումները իմաստավորում են այդ շարժումը, բացահայտում են Մուրաֆյանի քնարական ներաշխարհը: Դիպտոր, միաժամանակ հաղորդվում է պարանի փայլից նկարչի սրտում բուն դրամ ողբերգական հնչերանգներին», - գրել է արվեստաբան Շահեն Խաչատրյանը:

Արմեն-Կող Մուրաֆյանին ուղղված շնորհակալական նամակում ռեկտորի պաշտոնակատար դոցենտ Ծովինար Մովսիսյանը նշել է, «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան երաժշտագիտություն է հայտնում խորհրդանշական և արժեքավոր նվիրատվության՝ Զարեհ Մուրաֆյանի «Կոմիտաս» կրավի համար: XX դարի հայ գեղարվեստի պարմության էջերում Զարեհ Մուրաֆյանի անձն ու գործը վաղուց արժանացել են բարձր գնահատականի: 1967-ին, երբ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ջանքերով Երևանում առաջին անգամ կազմակերպվում է Ձեր հայրիկի ցուցահանդեսը, փայլությունների մալուխում առաջին գրառումը կարարում է Մինասը. «Մուրաֆյանի պայծառ ձիրքը շար լավ է, որ այսօր մենք փնտռում ենք մեզ մոտ»՝ Հայաստանում: Նրա նկարները հոգևորական բարդ և միաժամանակ հայկական խառնվածքի հերթանք են, որոնք և հանդիսանում է նրա նկարչության առաջին դրական հատկանիշը: Ըստ իս, ինչ ներկայացված է այստեղ, անվիճելիորեն համաշխարհային մակարդակի վրա է գործվում է պարիսկ է բերում բովանդակ հայության»:

Ձեր ընթանիքի մի թանկ մասունք՝ Զարեհ Մուրաֆյանի 1935-ին վրձնած «Կոմիտաս» կրավը, մեզ է փոխանցում Վարդապետի մահվան բոթը, որ փայլաբանակ 28 ամյա նկարչի խոր կնիքի արտահայտումն է: Զարեհ Մուրաֆյանը Կոմիտասին փնտռում է Լ.վ.Բեթովինի, Ո.Շոմանի, Ֆ.Շոպենի, Ո.Վագների, Ֆ.Լիստի՝ համաշխարհային դասականների ուղեծրում՝ այդկերպ ցույց տալով սեփական մշակութային ուժը՝ աշխարհի հեղ համընթաց քայլերու իրավունքը:

Շնորհակալ ենք նաև Զարեհ Մուրաֆյանի դիպուկ և բարձրարվեստ գրչին պատկանող գրքերը՝ «Հայաստանի մեջ վրձնում և գրիչով» (Փարիզ, 1970), «Նկարչության դասական դպրոցները և արդի ձգվումները» (Փարիզ, 1982), կոնսերվատորիային նվիրելու համար, որոնք վարահաբար անհրաժեշտ ներդրում են ուսումնական գործընթացում...»:

✧ Դեկտեմբերի 14-ին, Գաֆեսճյան արվեստի կենտրոնում կայացավ Կամերային գործիքային անսամբլի



ԵՊԿ պրոֆեսոր Իրինա Բադայան, ԵՊԿ ուսանողներ, Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի համերգը

ամբիոնի համերգը:

Պրոֆեսոր Իրինա Բադայանի հետևողական ու ակտիվ նախաձեռնությամբ դասընթացին մասնակից ուսանողները վերջին տարիներին հնարավորություն են ունենում անսամբլային նվագով ապրել բնական ելույթ ունենալու ուրախությունն ու համոզվելու կամ որոշելու երաժշտական կատարողական ասպարեզում ապագա նախապատվությունների ուղիները:

✧ Կոմպոզիցիայի ամբիոնը շարունակում է վերջին տարիների ավանդույթը. կատարողական ամբիոնների համագործակցությամբ պրեմիերային կատարմամբ, դեկտեմբերի 20-ին, ԵՊԿ Ղազարոս Մարյանի անվան օպերային ստուդիայի դալիժում հնչեցին ուսանող կոմպոզիտորների՝ Մերի Գրիգորյանի, Զեֆյուս Նազարեանի, Շուշան Արևշատյանի, Մայր Առաքելյանի, Վահե Աբրահամյանի, Էրիկա Մարկոսյանի, Միլենա Ղազանչյանի, Հայկազ Բալումյանի, Գայանե Միս-յանի, Հոսսեյն Սադեղի, Նապոլեոն Պողոսյանի, գործերը:



Մերի Շարաթյան

✧ Դեկտեմբերի 18-ին կայացավ ԵՊԿ Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնին (ամբիոնի վարիչ՝ դոցենտ Լ. Եփրեմյան) կից գործող Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի և Դո-Ռե-Միթ մշակութային ՀԿ-ի (ղեկավար՝ Թ. Օնանյան) համատեղ միջոցառումը Երևանի Loft-ում:

Արտ-թերապիայի ոլորտում արդեն մեկուկես տարի աշխատող ԵՊԿ ուսանողներ Էլենորա Հարությունյանը (3-րդ կուրս, ա կ ա դ ե մ ի ա կ ա ն երգեցողության բաժին, դասախոս՝ դոցենտ Զ. Նազարյան) և Զարուհի Մինասյանը (4-րդ կուրս, դաշնամուրային բաժին, պրոֆեսոր Զ. Բարսեղյան) ելույթ ունեցան «Հիշողության սրճարան» ակումբի հիշողության խնդիրների դեմ պայքարող անդամների համար՝ շնորհակալ ունկնդրին պարզեցնելով նախատեսված բարձր տրամադրություն: Հայ և արտասահմանյան երկերի դասական ծրագրին Է. Հարությունյանը հավելեց նաև կիթառի ուղեկցությամբ հանրահայտ երգերի, ինտերակտիվ երաժշտական ժխմական խաղի, ինչպես նաև պարային եղանակների բաժինը՝ հանդիսատեսի ակտիվ մասնակցությամբ:



Էլենորա Հարությունյան

✧ Դեկտեմբերի 25-ին, ԵՊԿ 4-րդ հարկի դահլիճում կայացավ 2024 թվականը եզրափակող Գիտական խորհրդի նիստը:

Օրակարգի վերջում, ըստ ավանդույթի, «ԵՊԿ 100» հու-



Դավիթ Ղազարյան, Ծովինար Մովսիսյան

շանդեղյանները (հեղինակ՝ Միքայել Մինասով) փոխանցվեցին նիստին ներկա տարվա հորեյարներին՝ Խմբավարական ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանին, Վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան, դոցենտ Ռուբեն Ասատրյանին, Փողային և հարվածային գործիքների ամբիոնի պրոֆեսոր Հարություն Մկրտչյանին, Ակադեմիական երգեցողության ամբիոնի դոցենտ Գայանե Մաթևոսյանին, Օպերային և սիմֆոնիկ դիրիժորության և խմբավարության ամբիոնի



Կարինե Մկրտչյան, Ծովինար Մովսիսյան

պրոֆեսոր Տիգրան Հեքեթյանին, Ակադեմիական երգեցողության ամբիոնի պրոֆեսոր Կարինե Մկրտչյանին, Զագփուփ երաժշտության ամբիոնի պրոֆեսոր Գևորգի Ղասաբյանին, Ընդհանուր դաշնամուրի ամբիոնի դոցենտ Նաիրա Խաչատրյանին, Ակադեմիական երգեցողության ամբիոնի դոցենտ Ալեքսանդր Թամազովին, Փողային և հարվածային գործիքների ամբիոնի պրոֆեսոր Վաղարշակ Պեպանյանին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

✧ Դեկտեմբերի 18-ին, «Էրագմուս» ծրագրով կայացավ Զագրեթի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր, Խորվաթիայում հիմնադրված Հայ-Խորվաթական միության փոխնախագահ, «Pasionska bastina» (թարգմ.՝ «Չար-չարանքի ժառանգություն») հոգևոր մշակութային կենտրոնի նախագահ Էվա Կիրիսմայեր Բիլիչի «Խորվաթական երաժշտության համայնապատկեր» համերգ-դասախոսությունը:

Ռեկտորի պաշտոնակատար դոցենտ Ծովինար Մովսիսյանը հյուրին հանձնեց շնորհակալագիր՝ կարևորելով կոնսերվատորիայի հետ բացառիկ համագործակցությունը: Նշենք, որ շնորհիվ Էվա Կիրիսմայեր Բիլիչի, հայ երաժշտությունը հետևողականորեն ներառվում է խորվաթ երաժիշտների, ինչպես նաև Զագրեթի երաժշտական ակադեմիայի ուսումնական երկացանկում: Խորվաթական երաժշտության մասին խոսելով՝ բանախոսն անխուսափելիորեն անդրադարձավ նաև Խորվաթիայի պատմության առանցքային դրվագներին, ընդգծելով որոշ պատմական հանգրվաններ՝ Տոմիսլավ արքայի գահակալումը (925-1102), Խորվաթիայի անկախությունը (1469 թվական), XVI դարի պատմական իրադարձությունները, երբ Օսմանյան կայսրության արշավանքից քրիստոնյա եվրոպան փրկած խորվաթներին Հռոմի Պապ Լեոն X-ը տվել էր «Քրիստոնեության բաստիոն» պատվավոր գնա-



Էվա Կիրիսմայեր Բիլիչ

հատականը: Էվա Կիրիսմայեր Բիլիչը խոսեց խորվաթական ազգային մոնոդիայի և բազմաձայնության, երաժշտատեսական համակարգի, լեզվի, գրավոր խոսքի, երաժշտության զարգացման փուլերի մասին, անդրադարձավ երկրի տարբեր շրջանների, առանձին կղզիների երաժշտամշակութային յուրահատուկ դիմագծին և դրա պատճառականությանը: Դասախոսության ընթացքում հնչեցին խորվաթական ժողովրդական, հոգևոր երաժշտական ժառանգության մի քանի ցայտուն նմուշներ: Բանախոսության մաս էր կազմում ազգային կոմպոզիտորական դպրոցի համայնապատկերը: Համերգ-դասախոսության ավարտին պրոֆեսորը կատարեց խորվաթ անվանի կոմպոզիտոր Դորա Պեյաչևիչի (Dora Pejačević) «Երգ առանց խոսքի» օր. 10 մանրանվագը: Նշենք նաև, որ դեկտեմբերի 11-ին, Էվա Կիրիսմայեր Բիլիչն անցկացրել էր նաև վարպետության դաս, որին մասնակցել են Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի պրոֆեսորներ՝ Իրի-նա Բադայանի (վարիչ), Ալիսա Արզումանյանի, Զուլիետա Խաչատրյանի և Գայանե Հովհաննիսյանի դասարանների ուսանողները:

<https://www.facebook.com/YerevanStateConseatory>



ԵՐԱԺԻՇS # 12 դեկտեմբեր 2024